Համաշխարհային տնտեսական համաժողովի
«Համաշխարհային մրցունակության 2010 - 2011 թթ. ինդեքս»

2010թ. սեպտեմբերի 9-ին Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակել է ***«Համաշխարհային մրցունակություն 2010/2011»*** զեկույցը, որում Հայաստանը աշխարհի 139 երկրների շարքում զբաղեցրել է 98-րդ տեղը՝ նախորդ տարվա 97-րդ տեղի համեմատ:

Երկրների մրցունակության մակարդակը գնահատելու նպատակով Համաժողովի փորձագետները դիտարկում են յուրաքանչյուր երկրի տնտեսության ***տասներկու հիմնասյուների*** (հաստատությունների, ենթակառույցների, մակրո-տնտեսական կայունության, առողջապահության և տարրական կրթության, բարձրագույն կրթության և վերապատրաստումների, ապրանքային շուկայի արդյունավետության, աշխատուժի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի զարգացածության, տեխնոլոգիական պատրաստվածության, շուկայի չափի, գործարարության զարգացածության և նորամուծությունների) մեջ ներառվող շուրջ 110 առանձին ցուցանիշներ:

Մրցունակության 12 հիմնասյուներից բարելավում է գրանցվել 4-ում՝ առողջապահության և առաջնային կրթության (նախորդ տարվա 97-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 93-րդ տեղը), բարձրագույն կրթության և վերապատրաստման (նախորդ տարվա 96-րդ տեղի փոխարեն՝ 91-րդ տեղը), ապրանքային շուկայի արդյունավետություն (նախորդ տարվա 116-րդ տեղի փոխարեն՝113-րդ տեղը) և գործարարության զարգացվածության (նախորդ տարվա 112-րդ տեղի փոխարեն՝ 109-րդ տեղը) ոլորտներում: Փոփոխություն չի արձանագրվել աշխատուժի շուկայի արդյունավետության ոլորտում, համաձայն որի ինչպես և նախորդ տարի, Հայաստանը գրավում է 47-րդ տեղը:

Մրցունակության 12 հիմնասյուներից ամենամեծ հետընթացը գրանցվել է **մակրոտնտեսական կայունության** (նախորդ տարվա 53-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 99-րդ տեղը) ոլորտում: Նախորդ տարվա համեմատ վատացումներ են արձանագրվել նաև **ֆինանսական շուկայի զարգացածության** (նախորդ տարվա 97-րդ տեղի փոխարեն՝ 110-րդ տեղը), **ենթակառույցների զարգացման** (նախորդ տարվա 81-րդ տեղի փոխարեն՝ 90-րդ տեղը), **շուկայի չափի**

(նախորդ տարվա 109-րդ տեղի փոխարեն՝ 116-րդ տեղը) և **տեխնոլոգիական պատրաստվածության** (նախորդ տարվա 105-րդ տեղի փոխարեն՝ 108-րդ տեղը) ոլորտներում (տե՛ս աղյուսակ 1):

«Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականի էական վատացումը հիմնականում պայմանավորված է 2009թ.-ին **ՀՆԱ-ում պետբյուջեի պակասուրդի և պետական պարտքի բարձր տեսակարար կշիռներով**: Մասնավորապես, եթե 2008թ. պետբյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշով (1.4%) Հայաստանը աշխարհի 133 երկրների թվում զբաղեցնում էր 66-րդ տեղը, ապա 2009թ.-ի ցուցանիշով (7.7%) աշխարհի 139 երկրների թվում գրավում է 113-րդ տեղը: Նույնը վերաբերում է նաև պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշին, համաձայն որի Հայաստանը նախորդ տարվա 19-րդ տեղի փոխարեն (ՀՆԱ-ում՝ 15.8%) ներկայումս զբաղեցնում է 70-րդ տեղը (ՀՆԱ-ում 40.1%): Բացի այդ, «Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականի վատացման վրա ազդել են նաև **երկրի սուվերեն վարկանիշի վատացումը** և **ազգային խնայողություններ/ՀՆԱ գործակցի նվազումը.** վերջինս նախորդ տարվա 28.5%-ից հասել է 23.8%-ի: Ինչ վերաբերում է «Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան տարր կազմող **գնաճի միջին տարեկան փոփոխությանը**, ապա նկատենք, որ թեև 2009թ.-ին Հայաստանի միջին տարեկան գնաճը նախորդ տարվա 9%-ի համեմատ եղել է զգալիորեն ցածր և կազմել է 3.4%, այնուամենայնիվ աշխարհի մյուս երկրների ընդհանուր գնանկումային միտումների արդյունքում Հայաստանի տեղը նախորդ տարվա համեմատ վատացել է և ներկայումս զբաղեցնում է 78-րդ տեղը՝ նախորդ տարվա 75-րդի փոխարեն: Նույնը վերաբերում է նաև վարկավորման և ավանդների միջին տոկոսադրույքների սպրեդին, որը թեև նախորդ տարվա համեմատ կրճատվել է (10.4%-ից հասել է 10.1%-ի), այնուամենայնիվ այդ ցուցանիշի գծով Հայաստանը նախորդ տարվա 106-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 112-րդ տեղը:

«Ֆինանսական շուկայի զարգացվածության» հիմնասյան գնահատականի վատացումը հիմնականում պայմանավորված է **օրենսդրական իրավունքների ինդեքսի**, **տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորման** և **վարկերի մատչելիության** ցուցանիշների վատացմամբ:

Օրենսդրական իրավունքների ինդեքսը ցույց է տալիս, թե որքանով են տվյալ երկրի գրավի և սնանկության մասին օրենքները հեշտացնում վարկավորումը: «Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում Հայաստանը այս ինդեքսով զբաղեցնում է 60-րդ տեղը՝ նախորդ տարվա 36-րդ տեղի համեմատ: Բանն այն է, որ օրենսդրական իրավունքների ինդեքսը Համաժողովը վերցնում է Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** հետազոտությունից, որում այդ ինդեքսի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը Համաշխարհային բանկի փորձագետները ստանում են տվյալ երկրի ֆինանսական իրավաբաններից և համապատասխան օրենքներից: Ընդ որում, Համաշխարհային բանկի փորձագետները այդ հարցին վերաբերող լրացուցիչ կամ առավել թարմ տեղեկատվություն ստանալու դեպքում կարող են վերագնահատել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Այսպես, Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2009»** հետազոտությունում Հայաստանի օրենսդրական իրավունքների ինդեքսը 1-10 (10-ը՝ լավագույն) միջակայքում գնահատվել է 7 միավոր, համաձայն որի Համաժողովը «Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում Հայաստանին շնորհել է 36-րդ տեղը՝ աշխարհի 133 երկրների թվում: **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010»** հետազոտությունում Համաշխարհային բանկի փորձագետները Հայաստանի 2010թ. ինդեքսը գնահատել են 6 միավոր և, համապատասխանաբար, վատացել է Հայաստանի տեղը **«Համաշխարհային մրցունակություն 2010/2011»** զեկույցում (զբաղեցնում է 60-րդ տեղը): Բացի այդ Համաշխարհային բանկը վերագնահատել է Հայաստանի 2009թ. օրենսդրական իրավունքների ինդեքսը և այն «7»-ից իջեցրել է «6»-ի, այսինքն՝ եթե Համաժողովը նույնպես վերագնահատի Հայաստանի տեղը **«Համաշխարհային մրցունակություն 2009/2010»** զեկույցում, այն կհամապատասխանի 58-րդ տեղին՝ 133 երկրների թվում: Այսպիսով, կարելի է նկատել, որ նախորդ տարվա համեմատ Հայաստանի օրենսդրական իրավունքների ինդեքսի փոփոխություն, հետևաբար նաև՝ դիրքի վատացում գրեթե չի եղել, պարզապես նախորդ տարի Հայաստանի դիրքը բարձր է գնահատվել:

Ինչ վերաբերում է ***տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորման և վարկերի մատչելիության ցուցանիշներին***, դրանց աղբյուրը

Համաժողովի կողմից երկրներում իրականացվող հարցումներն են: Հայաստանյան 78 ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքում, Համաժողովի 2010/2011թթ. հետազոտությունում տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորման և վարկերի մատչելիության ցուցանիշների գծով Հայաստանի գնահատականը կազմել է 2.0-ական միավոր՝ նախորդ տարվա 2.7 և 2.2 միավորների փոխարեն:

Հարկ է նշել այն դրական փաստը, որ «Ֆինանսական շուկայի զարգացվածության» հիմնասյան տարր կազմող ***բանկերի սահունությունը*** և ***կապիտալ հոսքերի ազատականացումը*** հարցվողների կողմից Հայաստանում գնահատվել է բարձր և 2010/2011թթ. հետազոտությունում Հայաստանի տեղը այդ ցուցանիշների գծով մնացել է անփոփոխ, թեև «Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում ընդգրկված երկրների թիվն ավելացել է:

Հայաստանի տեղը աշխարհի 139 երկրների թվում, ինչպես նաև դրանց բարելավման կամ վատացման դինամիկան ներկայացված են աղյուսակ 2-ում, որը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի մրցունակության հիմնասյուների գնահատականների բարելավումը կամ վատացումը պայմանավորող գործոնները:

Ինչ վերաբերում է հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, ապա մրցունակության ցուցանիշով երկու երկրներն էլ գերազանցում են Հայաստանին: Ադրբեջանը մրցունակության ցուցանիշով զբաղեցնում է 57-րդ տեղը՝ աշխարհի 139 երկրների թվում և նախորդ տարվա համեմատ 6 մակարդակով հետընթաց է արձանագրել, իսկ Վրաստանը զբաղեցնում է 93-րդ տեղը և նախորդ տարվա համեմատ գրանցել է 3 մակարդակով հետընթաց (տե՛ս աղյուսակ 3): Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից միայն Բոսնիա և Հերցեգովինան է իր 102-րդ տեղով զիջում Հայաստանին, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Տաջիկստանն ու Ղրղզստանը:

«Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում մրցունակ երկրների առաջին տասնյակում են Շվեյցարիան, Շվեդիան, Սինգապուրը, ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան, Ֆինլանդիան, Նիդեռլանդները, Դանիան և Կանադան, իսկ վերջին տասնյակում՝ Նեպալը, Մոզամբիկը, Մալին, Թիմոր-Լեստեն, Բուրկինա Ֆասոն, Մավրիտանիան, Զիմբաբվեն, Բուրունդին, Անգոլան և Չադը:

Հայաստանի համաշխարհային մրցունակության 2010-2011թթ. ինդեքսը և առանձին հիմնասյուների ենթաինդեքսները, դրանց 2007-2010թթ. դինամիկան, Հայաստանի մրցակցային առավելությունները ու թույլ կողմերը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ինդեքսների համեմատական բնութագիրը ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Հայաստանի համաշխարհային մրցունակության գնահատականները ըստ համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 1

	Ինդեքսի անվանումը	2010-2011 թթ. երկրի դիրքը (աշխարհի 139 երկրների շարքում)[1]	2009-2010 թթ. երկրի դիրքը (աշխարհի 133 երկրների շարքում)[2]	2008-2009 թթ. երկրի դիրքը (աշխարհի 134 երկրների շարքում)	2007-2008 թթ. երկրի դիրքը (աշխարհի 131 երկրների շարքում)
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**98[3]**	**97**	**97**	**93**
1.	Հաստատություններ	97	95	96	96
2.	Ենթակառույցներ	90	81	90	87
3.	Մակրոտնտեսական կայունություն	99	53	83	57
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	93	97	97	99
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	91	96	94	95
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	113	116	110	104
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	47	47	45	40
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	110	97	107	110
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	108	105	112	104
10.	Շուկայի չափը	116	109	111	111
11.	Գործարարության զարգացվածությունը	109	112	120	115
12.	Նորամուծություններ	116	108	106	94

1 2010-2011թթ. հետազոտության մեջ ավելացել են 7 երկիր՝ Անգոլան, Կապե Վերդեն, Ռուանդան, Սվազիլանդը, Իրանը, Լիբանանը և Մոլդովան և դուրս է եկել Մուրինամը՝ գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով:
2 Ի տարբերություն նախորդ տարվա՝ Մոլդովան չի ներառվել դիտարկվող երկրների թվում:
3 Եթե Հայաստանի 2010/2011թթ. մրցունակության գնահատականը դիտարկում ենք 2009/2010թթ. հետազոտության մեջ ընդգրկված 133 երկրների թվում, Հայաստանը զբաղեցնում է 94-րդ տեղը:

Հայաստանի համաշխարհային մրցունակության գնահատականները ըստ համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 2

	Ինդեքսի անվանումը	2010-2011 թթ. երկրի դիրքը աշխարհի 139 երկրների շարքում	2009-2010 թթ. երկրի դիրքը աշխարհի 133 երկրների շարքում	2008-2009 թթ. երկրի դիրքը աշխարհի 134 երկրների շարքում	2007-2008 թթ. երկրի դիրքը աշխարհի 131 երկրների շարքում
1	**Հաստատությունների ինդեքս**	**97**	**95**	**96**	**96**
1.01	Մասնավոր սեփականության իրավունքը	98	79	69	69
1.02	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	107	107	108	107
1.03	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	103	104	110	106
1.04	Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը	89	92	104	108
1.05	Անօրինական վճարներ և կաշառակերություն	104			
1.06	Դատական համակարգի անկախությունը	118	122	123	120
1.07	Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը	78	82	94	110
1.08	Կառավարության ծախսումների շռայլումը	54	54	77	87
1.09	Կառավարության կարգավորման բեռը	91	64	71	77
1.10	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում	104	111	97	104
1.11	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում	103	98		
1.12	Կառավարության քաղաքականության թափանցիկությունը	53	65	103	104
1.13	Ահաբեկչության գործարար ծախքը	32	26	33	40

1.14	Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը	31	23	32	35
1.15	Կազմակերպված հանցագործությունը	66	69	67	57
1.16	Ոստիկանական ծառայության հուսալիությունը	112	104	95	92
1.17	Ընկերությունների բարոյական վարքագիծը	118	115	115	111
1.18	Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը	101	92	97	99
1.19	Կորպորատիվ խորհուրդների ուժը	130	123	123	113
1.20	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը	131	123	124	117
1.21	Ներդրողների պաշտպանվածությունը	77	71	67	65
2	**Ենթակառույցների ինդեքս**	**90**	**81**	**90**	**87**
2.01	Ընդհանուր ենթակառույցների որակը	76	78	91	84
2.02	Ճանապարհների որակը	87	72	79	75
2.03	Երկաթուղային ենթակառույցի որակը	79	82	83	84
2.04	Նավահանգստային ենթակառույցի որակը	128	117	115	104
2.05	Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը	77	74	85	88
2.06	Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2010 թ. հունվար և հուլիս ամիսների միջինը)	100	100	99	97
2.07	Էլեկտրականության մատակարարման որակը	78	82	89	90
2.08	Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով)	64	66	65	62
2.09	Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով)	81	93	123	109
3	**Մակրոտնտեսական կայունություն**	**99**	**53**	**83**	**57**
3.01	Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2009 թ.	113	66	103	96
3.02	Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2009 թ.	49	36	38	52
3.03	Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2009 թ.	78	75	61	39
3.04	Վարկավորման և ավանդների ներգրավման միջին տոկոսադրույքների սպրեդը, 2009 թ.	112	106	117	105
3.05	Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2009 թ.	70	19	26	32
3.06	Երկրի սուվերեն վարկանիշ	86	--	--	--

4	**Առողջապահություն և առաջնային կրթություն**	**93**	**97**	**97**	**99**
4.01	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	1	67	80
4.02	Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2007 թ.	1	1	67	67
4.03	Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա	84	48	69	88
4.04	Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2008թ.	80	79	75	76
4.05	ՁԻԱՀ-ի գործարար ծախքը	55	34	49	59
4.06	ՁԻԱՀ-ի կանխումը, 2008 թ.	22	15	23	25
4.07	Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2007թ.	82	75	84	86
4.08	Կյանքի սպասվող տևողություն (2008 թ.)	65	88	87	85
4.09	Առաջնային կրթության (դպրոցների) որակը	88	81	82	85
4.10	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2008 թ.	115	108	109	109
5	**Բարձրագույն կրթություն և վերապատրաստում**	**91**	**96**	**94**	**95**
5.01	Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը	69	62	57	59
5.02	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը	68	65	65	70
5.03	Կրթության համակարգի որակը	115	105	98	94
5.04	Մաթեմատիկական և գիտական կրթության որակը	74	73	76	65
5.05	Կառավարման դպրոցների որակը	130	125	124	121
5.06	Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում	107	101	103	107
5.07	Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը	124	120	125	111
5.08	Անձնակազմի վերապատրաստման մակարդակը	116	114	117	114
6	**Ապրանքային շուկայի արդյունավետությունը**	**113**	**116**	**110**	**104**
6.01	Տեղական մրցակցության ինտենսիվությունը	136	128	132	124
6.02	Շուկայի գերիշխանությունը	133	129	133	131
6.03	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	138	132	132	130
6.04	Հարկավորման չափը և ազդեցությունը	84	86	84	72
6.05	Հարկավորման ընդհանուր դրույքաչափը	56	52	42	52

6.06	Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը	34	75	58	52
6.07	Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակը	56	53	38	39
6.08	Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը	41	26	30	51
6.09	Առևտրային խոչընդոտների գերակայությունը	100	97	104	89
6.10	Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը (հաշվարկված 2007 թ. տվյալներով)	35	119	41	5
6.11	Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները	111	95	84	76
6.12	Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը Գործարարություն վրա	102	89	87	77
6.13	Մաքսային գործընթացների բեռը	138	131	122	121
6.14	Սպառողների կողմնորոշման աստիճանը	134	124	108	102
6.15	Գնորդների զարգացածությունը	75	83	88	94
7	**Աշխատուժի շուկայի արդյունավետությունը**	**47**	**47**	**45**	**40**
7.01	Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում	53	45	58	54
7.02	Աշխատավարձի սահմանման ճկունությունը	63	46	34	36
7.03	Զբաղվածության կոշտությունը	50	58	51	42
7.04	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները	33	22	16	40
7.05	Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով)	21	19	19	17
7.06	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը	63	52	47	50
7.07	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը	117	115	125	127
7.08	Ուղեղների արտահոսքը	97	107	106	99
7.09	Աշխատուժի մեջ կանանց մասնակցությունը	41	36	41	38
8	**Ֆինանսական շուկայի զարգացածությունը**	**110**	**97**	**107**	**110**
8.01	Ֆինանսական ծառայությունների առկայությունը	121	103	107	112
8.02	Ֆինանսական ծառայությունների մատչելիություն	104			
8.03	Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը	131	112	112	119
8.04	Վարկերի մատչելիությունը	124	119	120	123

8.05	Վենչուրային կապիտալի առկայությունը	131	129	130	124
8.06	Կապիտալ հոսքերի սահմանափակումները	57	57	60	63
8.07	Բանկերի սահունությունը	81	81	88	90
8.08	Արժեթղթերի շրջանառության կարգավորումները	121	118	119	121
8.09	Օրենսդրական իրավունքների ինդեքսը	60	36	52	47
9	**Տեխնոլոգիական պատրաստվածությունը**	**108**	**105**	**112**	**104**
9.01	Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը	127	115	116	113
9.02	Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը	121	105	109	81
9.03	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում	79	85	92	83
9.04	Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով), 2008 թ.	111	109	102	97
9.05	Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	108	86	102	99
9.06	Միջազգային ինտերնետի արագությունը (ՄԲ/վայրկյան)-2010թ.	73	--	--	--
10	**Շուկայի չափը**	**116**	**109**	**111**	**111**
10.01	Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում)	111	104	106	108
10.02	Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը)	129	125	125	120
11	**Գործարարության զարգացածությունը**	**109**	**112**	**120**	**115**
11.01	Տեղական արտադրողների քանակը	110	112	114	110
11.02	Տեղական արտադրողների որակը	116	112	111	114
11.03	Կլաստերների զարգացման վիճակը	124	122	130	118
11.04	Մրցակցային առավելության բնույթը	39	41	60	57
11.05	Արտահանող ընկերությունների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը	121	103	94	82
11.06	Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը	110	113	122	121
11.07	Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը	100	99	103	98
11.08	Մարքեթինգի մակարդակը	119	118	123	123

11.09	Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը	128	126	123	123
12	**Նորամուծություններ**	**116**	**108**	**106**	**94**
12.01	Նորամուծությունների ունակությունը	65	66	68	72
12.02	Գիտահետազոտական ինստիտուտների որակը	103	98	101	83
12.03	Հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ընկերությունների ծախսերը	127	115	96	110
12.04	Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն	124	114	116	104
12.05	Տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները	134	124	122	111
12.06	Գիտնականների և ինժեներների առկայությունը	93	91	80	58
12.07	Պատենտների քանակը (2008 թ., 1 մլն մարդու հաշվով)	90	69	63	54

Հարավկովկասյան երկրների համաշխարհային մրցունակության գնահատականները 2010/2011 թթ[4]. և 2009/2010թթ[5].՝ ըստ համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 3

	Ինդեքսի անվանումը	Հայաստան		Վրաստան		Ադրբեջան	
		2010-2011թթ	2009-2010թթ	2010-2011թթ.	2009-2010թթ.	2010-2011թթ.	2009-2010թթ.
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**98**	**97**	**93**	**90**	**57**	**51**
1.	Հաստատություններ	97	95	69	72	71	55
2.	Ենթակառույցներ	90	81	73	72	76	58
3.	Մակրոտնտեսական կայունություն	99	53	130	117	12	27
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	93	97	73	78	83	96
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	91	96	90	84	77	72
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	113	116	64	74	93	71
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	47	47	31	17	25	13
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	110	97	108	95	71	66
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	108	105	98	100	70	75
10.	Շուկայի չափը	116	109	107	101	76	78
11.	Գործարարության զարգացվածությունը	109	112	111	113	72	74
12.	Նորամուծություններ	116	108	125	119	61	42

[4] *Երկրի տեղը աշխարհի 139 երկրների շարքում:*
[5] *Երկրի տեղը աշխարհի 133 երկրների շարքում:*

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2010-2011թթ. գնահատականների (աշխարհի 139 երկրների շարքում)

Աղյուսակ 4

Առավելությունները	Տեղը	Թույլ կողմերը	Տեղը
Հաստատություններ - 97			
Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը	31	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը	131
Անաբեկչության գործարար ծախքը	32	Կորպորատիվ խորհուրդների ուժը	130
		Դատական համակարգի անկախությունը	118
		Ընկերությունների բարոյական վարքագիծը	118
		Ոստիկանական ծառայության հուսալիությունը	112
		Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	107
		Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում	104
		Անօրինական վճարներ և կաշառակերություն	104
		Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	103
		Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում	103
		Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը	101
		Մասնավոր սեփականության իրավունքը	98
		Կառավարության կարգավորման բեռը	91
		Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը	89

		Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը	78
		Ներդրողների պաշտպանվածությունը	77
		Կազմակերպված հանցագործությունը	66
		Կառավարության ծախսումների շռայլումը	54
		Կառավարության քաղաքականության թափանցիկությունը	53
Ենթակառույցներ - 90			
		Նավահանգստային ենթակառույցի որակը	128
		Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2010 թ. հունվար և հուլիս ամիսների միջինը)	100
		Ճանապարհների որակը	87
		Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով)	81
		Երկաթուղային ենթակառույցի որակը	79
		Էլեկտրականության մատակարարման որակը	78
		Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը	77
		Ընդհանուր ենթակառույցների որակը	76
		Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով)	64
Մակրոտնտեսական կայունություն - 99			
Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2009 թ.	49	Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2009 թ.	113
		Վարկավորման և ավանդների ներգրավման միջին տոկոսադրույքների սպրեդը, 2009 թ.	112
		Երկրի սուվերեն վարկանիշ	86
		Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2009թ.	78
		Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2009 թ.	70

Առողջապահություն և առաջնային կրթություն - 93			
Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2008 թ.	115
Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2007 թ.	1	Առաջնային կրթության (դպրոցների) որակը	88
ՁԻԱՀ-ի կանխումը, 2008 թ.	22	Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա	84
		Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2007թ.	82
		Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2008թ.	80
		Կյանքի սպասվող տևողություն (2008 թ.)	65
		ՁԻԱՀ-ի գործարար ծախքը	55
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում - 91			
		Կառավարման դպրոցների որակը	130
		Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը	124
		Անձնակազմի վերապատրաստման մակարդակը	116
		Կրթության համակարգի որակը	115
		Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում	107
		Մաթեմատիկական և գիտական կրթության որակը	74
		Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը	69
		Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը	68

Ապրանքային շուկայի արդյունավետությունը - 113			
Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը	34	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	138
Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը (հաշվարկված 2007 թ. տվյալներով)	35	Մաքսային գործընթացների բեռը	138
Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը	41	Տեղական մրցակցության ինտենսիվությունը	136
		Սպառողների կողմնորոշման աստիճանը	134
		Շուկայի գերիշխանությունը	133
		Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները	111
		Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը Գործարարություն վրա	102
		Առևտրային խոչընդոտների գերակայությունը	100
		Հարկավորման չափը և ազդեցությունը	84
		Գնորդների զարգացածությունը	75
		Հարկավորման ընդհանուր դրույքաչափը	56
		Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակը	56
Աշխատուժի շուկայի արդյունավետությունը - 47			
Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով)	21	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը	117
Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները	33	Ուղեղների արտահոսքը	97
Աշխատուժի մեջ կանանց մասնակցությունը	41	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը	63
Ջբաղվածության կոշտությունը	50	Աշխատավարձի սահմանման ճկունությունը	63

		Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում	53
Ֆինանսական շուկայի զարգացածությունը - 110			
		Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը	131
		Վենչուրային կապիտալի առկայությունը	131
		Վարկերի մատչելիությունը	124
		Ֆինանսական ծառայությունների առկայությունը	121
		Արժեթղթերի շրջանառության կարգավորումները	121
		Ֆինանսական ծառայությունների մատչելիություն	104
		Բանկերի սահունությունը	81
		Օրենսդրական իրավունքների ինդեքսը	60
		Կապիտալ հոսքերի սահմանափակումները	57
Տեխնոլոգիական պատրաստվածությունը - 108			
		Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը	127
		Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը	121
		Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով), 2008 թ.	111
		Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	108
		ՕՈՒՆ-եր և տեխնոլոգիաների փոխանցում	79
		Միջազգային ինտերնետի արագությունը (ՄԲ/վայրկյան)-2010թ.	73
Շուկայի չափը - 116			
		Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը)	129
		Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում)	111

Գործարարության զարգացածությունը - 109			
Մրցակցային առավելության բնույթը	39	Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը	128
		Կլաստերների զարգացման վիճակը	124
		Արտահանող ֆիրմաների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը	121
		Մարքեթինգի մակարդակը	119
		Տեղական արտադրողների որակը	116
		Տեղական արտադրողների քանակը	110
		Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը	110
		Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը	100
Նորամուծություններ - 116			
		Տեխնոլոգիական արտադրանքի պետ. գնումները	134
		Հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ընկերությունների ծախսերը	127
		Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն	124
		Գիտահետազոտական հնստիտուտների որակը	103
		Գիտնականների և ինժեներների առկայությունը	93
		Պատենտների քանակը (2008 թ., 1 մլն մարդու հաշվով)	90
		Նորամուծությունների ունակությունը	65